


ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻՍ
Տարեկան . . 12 Ֆր.
Վեցամսեայ . . 6 "
ԱՐՏՈՍԱՆՄԱՆ
Երկու քիւ մեկ ծրարով
Տարեկան . . 14 Ֆր.
Վեցամսեայ . . 7 "
ԱՍԵՐԻԿԱ
Տարեկան 2,60 Տօլար
Վեցամսեայ 1,50 "
Կ Ա Ն Խ Ի Կ



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒ Ի ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՑԷ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА

Գրութիւնք եւս

չեն տրուիր

ԻՐԱՆԻՆԻՔ կը ծախուի Վառնայի մէջ թէ՛ ձեռքէ եւ թէ՛ „Ստամբուլ“ սրճարանին կից հայ ծխախմորին քով:

„Իրանուհի“ կուսակցական թերթ մը չըլլալով հանդերձ, կը խոստովանի թէ՛ վեջերս շատ տեղ տուած էինք կուսակցական խնդիրներու: Բայց ասկէ անդին պիտի քանակաւ կարելի եղածին չափ նուազեցնել այդ մասը: Արդէն յաջորդ թիւով կը վերջանայ բանասիրական բաժինը գրաւոր ՄԻՈՒԹԵԱՆ ԹՇՆՍԻՆԵՐԸ, որուն պիտի յաջորդէ Տ. Արմէն Երանանանի պատրաստած «ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ...» կաղանդի նորակէպը:

Ասկէ առաջ Տ. Երանանանի արտադրած «Թիւագրութիւն» (Զինգիւն) եւ «Անցումներ» երկերը անշուք աւարտած կարգացողած ըլլալով մեր ընթերցողներէ, վստահ ենք թէ նոյն ընդունելութիւնը պիտի գտնէ նաեւ իր այս ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ նորակէպը: Եւ մենք ամէն ջանք ի գործ պիտի դնենք այդպէս ընելու «Իրանուհի» Սոցալիստ եւ Գաղափարական բաժիններու պարունակութիւնը:

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Երեքշաբթի օր քաղաքիս մէջ ցրուած յայտարարութիւն մը կ'իմացնէր թէ Սահմանադրութեան մէջ պիտի բանախօսէ Տ. Խուչպուլեան նիւթ ունենալով «Միութեան անհրաժեշտութիւնը եւ կարելիութիւնը»: Արդեաւ ժամանակ մասնախումբի անդամները եւ ատենախօսը բեմ ներկայացանք: Գուրդէթեան երկու խօսքով յայտնեց թէ Տ. Խուչպուլեանի քաղաքի ժամանակէն ի վեր մտադրութիւն կար մերթ ընդ մերթ լսարան կազմել, որպէսզի եր հասուն գաղափարներէն ժողովուրդը օգտուի: այդ մտադրութիւնը այսօրու ընէ կը սկսինք գործադրել, եւ կը յաւանք թէ յետ այսորիկ Վառնայի ժողովուրդը ստէպ առիթ պիտի ունենայ զինք լսելու: Եւ հրաւիրեց Տ. Խուչպուլեանը խօսելու:

Ատենախօսը առաջ անցնելով, նախ ըսաւ թէ հայ կեանքի մէջ այժմ գաղափարական քառս մը կը տիրէ: այդ այլապէս գաղա-

փարներուն դատաւարութիւնը տալու է որ մարտի ու տկար կեանքը չը պայթի: Այդ գաղափարութեան մէջ առաջին տեղը պէտք է բռնէր անհրաժեշտութեան կարգով, Հայքներէ Սոցալիստական գաղափարը: Եւ այդ գաղափարը արդէն ընդհանուր հայութեան առջեւ դրուած է: Վանի իրադրո՞ծել հարկաւոր է: ուրիշ ահէն գաղափար այդ ճամբուն մէջ պէտք է տեղի տայ ու լռէ: Գաղափար աւելի կը մեծնայ երբ այդ այլապէս գաղափարներուն հետ անձեռու խնդիրներ ալ կը խառնուին, ինչպէս որ մեր յեղափոխական լուսնի է, ուր ահէն ինչ տնտեսականի, շինութիւն մասի է:

Ատենախօսը Հին հնչակ. ներկայացուցիչ Պ. Հրահատի այն յայտարարութիւնը թէ՛ իր կուսակցութիւնը եղբայրասպանութեան դէմ է՝ անբաւարար նկատեց ժողովուրդը ըսաւ իր օգտին անկեղծ աշխատել խոտաւորները կ'անայ սիրով ընդունելու մերթ ներդրամիս գտնուել: Բայց այդ ժողովուրդը պէտք է նաեւ խիստ եւ պահանջող լինի: Հին հնչակեան կեդրոնը 13 անձեր արտաքսեց, եւ մէկը, ատենցմէ զիս դուրս կը գնեմ ու կը յանձնեմ ժողովուրդի գաղափարներէն: Բայց կը պահանջեմ ժողովուրդին հետ միւս 12 դուրս հանուածներուն բարոյական պատիւը ու կեանքի ապահովութիւնը որ տակաւին վտանգի մէջ է, քանի որ ամբաստանութիւնը եւս չէ առնուած: Տ. Խուչպուլեան ըսաւ «բաւական չէ յայտարարել որ եղածը եղած է, ինչ կարելի է անել: այլ հարկաւոր է եւ մի դարման բերել իրենի կացութեան որպէսզի նորէն չկրկնուին, եւ նա, պ. ներկայացուցիչը ոչ մի դարման չբերաւ»: Քանի որ կընդունին Միւսիւն եւ Զինգեանի սպանութիւնները եղբայրասպանութիւն, ընդունած կըլլան նաեւ թէ Հնչակի մէջ եղած մարտաշարութիւնները անհիշեալ են, իսկ երբ կը պահեն այդ մարտաշարութիւնները, ինչպէս պ. ներկայացուցիչը

յայտարարեց, ինչ նշանակութիւն կունենայ իրենց ցաւիլը անոնց վրայ եւ գաղափարները եթէ ցարդ յանցաւորիկը ճանչնան զանոնք, ինչպէս իրենք ալ կը գաղափարեն անոնց սպանութիւնը իբր եղբայրասպանութիւն:

Յետոյ Պ. ատենախօսը ցոյց տուաւ թէ այդ բոլոր չարիքները կուսակցական բաժանումներէ առաջ կուգան, անհրաժեշտ գտաւ անոնց միացումը: Միութեան անհրաժեշտութիւնը երկար բացատրեց ու եղբայրացուց այսպէս «Միութիւնը անհրաժեշտ է եղբայրասպանութեան դէմ: Եւ ամբողջացման եւ ապանքանց մէկ ուղղութեամբ ընդհանուր թշնամու դէմ հանելու տեսակետներով»:

Խօսելով Միութեան կարելիութեան մասին, ատենախօսը պընդեց թէ արդեւք միայն ծրագրային է եւ իրողութիւններու կրթութեամբ հաստատեց որ Ընկերավարութիւնը եղած է միութեան արդեւքներէն մէկը, ու ըսաւ «90 ին կաշուած Դաշնակց. եւ Հնչակ. միութիւնը խղճեցաւ միայն սոցիալիստական մտահոգութիւններով, վերջին Հնչակեան փառաւոր միութիւնը խղճեցաւ դարձեալ միեւնոյն պատճառով»: Ատենախօսը համառօտակի պատմեց թէ ինչքան դժուար եղած էր երկու հատուածներու միջեւ միութիւնը ընկերավարութեան պատճառով գործող Հնչակեան հատուածը կը մերժէր ընդունիլ թէ ինչպէսզի Հնչակ Գ. պատգամաւորական ժողովը վերջապէս հարկադրուած էր զիջանիլ, առանց այդ գաղափարը վերջնականապէս ծրագրէն հանելու, անոր տալով միայն գաղափարային արտայայտութիւն, մինչեւ յառաջիկայ պատգամ. ժողովը Ասիէ կերելի որ Սոցիալիզմի պահպանման մտահոգութիւնը հին հատուածի ներկայացուցիչները դրդեց որ խղճան պատճառ դառնան: Այս իրողութեանց առջեւ բանախօսը յայտարարեց թէ սոցիալիզմը այլեւս ծրագրին մէջ պահել վտանգաւոր է,

քանի որ նա կը խանդարէ հայքներէ քի աղաւթութեան նուիրուելիք ուժերու միութիւնը:

«Այդ սոցիալիզմը ըսաւ նոյն իսկ գոյութեան իրաւունք չունի Դաշնակ. ծրագրին մէջ, ուր նա կայ, թէ եւ ծածկուած ձեռով. որովհետեւ այնքան ալ բաւական է եղած կարգ մը դաշնակցականներ տանել դէպի բուն սոցիալիստական գործողութիւնները եւ հեռանալ Դաշնակցութենէն»:

«Սոցիալիստական գաղափարը, ըսաւ, միայն անհատական սեփականութիւն կարող է լինել, ինչպէս ինձ համար է. բայց Հայքներէք աղաւթել կոչուած մարմիններու ծրագրին մէջ նա տեղ չունի, նա միայն փրփա կարող է բերել»:

Տալով վայրկեան գաղափար մը յետոյ, Տ. Խուչպուլեան համառօտակի բացատրեց սոցիալիզմի գաղափարը եւ ցոյց տուաւ որ երկու նպատակներ իրարմէ տարբեր են հիմնովին, սոցիալիզմը զուտ ընկերային խնդիր է, որ կը ձգտի իրագործել բոլոր մարդկութեան մէջ հաւասարաշխատանքի դիմաց հաւասար վայելքի սկզբունքը: մինչդեռ հայկական յեղափոխութիւնը նպատակ ունի աղաւթել Տաճարահայաստանը օսմանեան լուծէն, որուն տակ հաւասարապէս կը տանջուին իբր գերի բոլոր գաղափարները անխտիր, սա զուտ աղաւթիքաւաքական խնդիր է: Ատենախօսը գէտ է նոյն իսկ մեր մէջ զուտ ընկերավարական կուսակցութիւն կազմուելուն, որ մոռնալով Հայքներէք, ինքզինք նուիրէ մի միայն բանուորական գաղափարի վիճակը բարելաւելու: մինչդեռ պէտք է որ անոնք ալ հայութեան միւս մասին հետ Հայքներէքի փրկութեան համար ուղղակի կոչուին իբրեւ զինուոր:

Յետոյ ատենախօսը ծրագրային ուրիշ կէտերու անցնելով, խօսեցաւ կեդրոնացման եւ ապակեդրոնացման դրութեանց վերայ: քննադատեց ապակեդրոնացումը, որ իրօք անիշխանութիւն է, ըսաւ, ոչ ապակեդրոնացում: Յոյց տուաւ Դաշնակ-

ցութեան ծրագրային փոփոխութիւնները, որ կը նշանակէ թէ Դաշնակցականները իրենք ալ կը զգան այդ ձեւի խախտումը իրենց:

Այս վերաւերելի յետոյ, ատենախօսը անհրաժեշտ գտաւ որ կուսակցութիւնները գոնիկէս մը գումարեն, ուր Միութեան խնդիրը խորհրդակցութեան գրութեան իրաւունք մէկ ծրագիր ընդհանուր մէկ նպատակով և «Բոլորակցութեան» Անհիմնութեան հասկացման գտաւ որ հայ յեղակուսակցութիւնները գոնիկէս կազմեն Ներքինարդ թիւերը հետ, որուն ինք գէտ եղած է, իսկ իրենք Հայերը միեւնոյն նպատակի վրայ կեցած միեւնոյն այսօր չը մտածեն իրարու քով գալ և խորհրդակցել թէ ի՞նչ պէտք է ընել ընդհանուր գործի յաջողութեան համար:

Ատենախօսը վերջացաւ եղրակացիներով թէ Միութիւնը կարելի է և եւանգելիս յորդար կարգաց բոլոր հայերուն բռնել յեղափոխական ճամբան: Ներկայ հայ սեռերը մէկ գործ միայն ունի կարողութիւն, ըստ, այդ գործը Հայաստանի Ազատութիւնն է: Միանանք բոլորս աւանց ունէ խորութեան, հայկական անդամանի վրայ, խորունկ փորենք ակօր, ցանկեր յեղափոխութեան և հիմնք հայաստանի Ազատութիւնը:

Ժողովուրդը բռնել և սգեւորեալ ծախսահարկութիւններով ընդունեց ատենախօսին այս անկեղծ խօսքերը:

Մանթ խմբակի մը գրգռման պատանի մը հարցաւ թէ ի՞նչու վերակազմ. Հնչակեանները ու Միութեանները չեն միանալ, այդ պատանիին մէկ ըն-

կերն ալ ըսաւ թէ չէզոք ժողովուրդը դատարարութիւն է որ չեթաւր մէկ կուսակցութեան հետ միանալու:

Առաջինին պատասխանեցաւ թէ Միութեանները կաշմարտ պաշտան նպատակն է բոլոր յեղափոխակցութիւնները միացնել ու ինքն ալ միատեղ ձուլուիլ: Եւ Տ. Նախկին տեղի տալ երթալով յայտնեց թէ մօտ ժամանակի մէջ գումարանք ինք Միութեաններու Պատգ. Ժողովը գլխաւորապէս այդ խնդրով պիտի զբաղի:

Ներքին պատանիին ժողովուրդին մէջէն պատասխանեցաւ թէ ժողովուրդը ո՞ր կուսակցութեան հետ միանալու չուարած է:

Տ. Գալաթիութեան քանի մը խօսքով բացատրեց թէ ժողովուրդին մէկ կարեւոր մասին ձեռնպահութիւնը չէ կարելի բոլորովին դատապարտել, դատապարտելին այն կուսակցական պետերն են որ Միութիւնը անկարելի ընել կաշմարտ: Եւ վստահ եմ թէ, ըստ, երբ կուսակցութիւնները միանան, չէզոք մնացող ժողովուրդը ստաւար մեծամասնութեամբ պիտի գալ միանալ յեղափոխական միացեալ ուժին: Եւ այդ Միութիւնը բնական կարելի չէ, և թէ կուսակցութեան պետերը որ Միութեան օգտակարութիւնը սկզբունքով ընդունած են, անկեղծ հայրենասիրութեամբ հաւաքուին սեղանի մը շուրջը ծրագրի, անունի և անձի խնդիրները մէկ կազմի ներքին, և ընդհանուր ու միակ նպատակին, Հայրենիքի Ազատութեանը հասնելու համար փոխառութիւններէն օգտուելով համախառնաբար գծեն հաշիւներ:

ուղին, այսինքն միակ և նոր ծրագիր մը, և այդ ուղիով ընթանալ հրաւիրեն իրենց բոլոր ընկերները ու ամբողջ հայութիւնը, ահա այս պարագային բոլոր չէզոք կարծաւորներն ալ հաւաքուած ու միացած պիտի գտնենք Ս. Գործին շուրջը:

Մեծ գոհունակութեամբ և բռն ծախսահարկութիւններով վերջացաւ բանախօսութիւնը և ժողովուրդը շինել տպաւորութեան մը տակ մեկնեցաւ սրահէն:

Ներկայ մը

ԻՄ ԴԱՏԱՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մեր վիճակի աշխատակիցը այս խորագրով յօդուած մը զըրկած է մեզ անցեալ հինգշաբթի օրուան պ. Հրահատ Կառնարի բանախօսութեան առթիւ: Այդ յօդուածը աւելցնելով իրենց հրահատակել կրկնութիւնը պիտի ըլլաւ մեր վերջին երկու թիւերով հրատարակուածներուն բայց հոս աւելցնել չենք դատեր անոր գոնէ վերջին մասը հրատարակել որ բոլորովին տարբեր է հրատարակուածներէն և շատ բանտար:

Չ. թիւանի և Շահէնի սպանման առթիւ եղած հարցման, պ. Ներկայացուցիչը կարկամեցաւ. չուզեց նոյն և կամ լաւ եւս է ըսել չի կրցաւ հանդիսակցանոց յարեալ հետաքրքրութեան, զի մասամբ իսկ, բաւարարութիւն տալու չափ որչա և մեկին բացատրութիւն մը տալ:

Ջարմանալի կը թուի ինձ ստիպել թէ, ինչպէս պիտի վարդան, իրեւ ստակալին հայ-անհատ, և որ աւելին է, իրեւ Յեղ. կազմակերպութիւն:

Թեան մը պաշտօնական հանգամանքով ու զիրքով օժտուած հայ-նշարհական մը, ինչպէս իւր արժանապատուութեան թոյլ տալով կը զիջանի ձեռքը թօթուել ա՛յն ներկայացուցչին, որուն պատկանած կուսակցութեան հասցէին՝ զեռ և կէտ, ինք պիտի վարդան, և կեղեցեալ չըլլալով մէջ՝ սգահանգէսի մը առթիւ, հարկաւորանքուն ներկայութեամբ, Սոսնորարանի անդունդի քարձքունքին յուզեալ շեշտով մը, անյուր ոճրապարծութիւնը բնորոշող անկանխելու էն սարսուղ-զեղիկ որակով մով կը մկրտել ա՛յն կուսակցութիւնը, որուն բացարձակ քաղաքականութեամբ և գիւղային վերաբերման թէ Շահէն և Չ. թիւան արեւելուայ թաւաղոր ինկան, Հայ Յեղ շարքերուն մէջ նմանը չի տեսնուած նորարարական ոճրապարծութեան սպաշարին սրով մը ներմուծելով:

Թէ ինչ պաշտօնով, և ինչ որոշ առաքելութեամբ մեզ կ'ընկալանայ պիտի. Հրահատ-Կառնար, իր ներկ. Հնչ. կուսակցութեան. դա՛ մեզ տալով անդայ է Բայց ինչ որ ալ լինի, դատապարտելի է հայ ժողովուրդը, նշանակելի է մանաւանդ վառ-նայարանի հայութիւնը. որը մը քիչ առաջ առանց կուսակցական խտրութեան, խոր սուգի մ'առնած վատով սրտաբեկ, ժողովրդային հաւաքական ցոյցով մը՝ սրտադիպող զոյգի յիշատակին իւր յարգանքը մատուցանելով մեզ, իրեւ անորակելի ոճրապարծութեան, իւր յուզման և ցամաքի զգացումներն արտայայտեց առ Հնչակ. կեղ-րան որ գործուած Նորարարականութեան հաւանական հեղինակն կը նըկատուէր:

Արդ, և դարմանալի կը թուի ինձ թէ ինչպէս մանաւանդ վառնային կուզէ պահ մը մոտալուծեալ յանձնել իրոր ա՛յն սեւ անցքերու ու Շահէնի և Չ. թիւանի արեւ ներքինի դուր ևս չանհետացած, իւր մէջ ընդունել ձախտաւ առ ձախտ գալ, ա՛յն անձանց հետ, որք գործուած Նորարարականութեան այս լիակալութեան չ'ընկալէ և ի մօտուս թէ ի հետոյ, բարոյապէս կամ ֆիզիկապէս, այս, մեղսակիցներ ևս ա-

ՄԻՈՒԹԵԱՆ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Բ.

»Հնչակեան կուսակցութեան կեղ. վարչութեան «ուղղուած ամէն տեսակ թշնամի թիւներ, ծրագրանք և գրանիք կը համարն միեւնոյն տունը. որուն գանձերը գուր կը փակէ մեր առջեւ, սակայն «ձեռք երեքն ո՛ր է մեկուն առջեւ ամէն վարչական քաղց ևս ա՛յն ու պաշտօնավարին գանձերը:

«Դուք՝ առանց մեր գիտութեան կը բանալ հաւսած նամակները, վար կը գնէք գրամները. որոնք քրտ վարչութեան որոշումին՝ պարտաւոր է իր յանձնել կեղ. վարչութեան գանձապահին:

«Ասանք ապօրինութիւններ ևս, որոնց գէտ ժամանակին մեր ըրած բոլորքները ցարդ արդիւնք մը չուր: «Նմանաբէ» այսօր գրաւորապէս պարտք կը զգանք «կրկնել մեր պահանջներն ու բողոքները:

«Ու անգամ մի ալ կրկնել թէ՛

«Այն օրը, ուր ապօրինութիւնները կը դադրեցնէք մեր վերջին տեսնումներն իրաւունքները «յարգել կը փութաք՝ այն օրը, որ կեղեցեալան «վարչութեան հասած գրամները գանձապահին յանձնէք, այն օր իրաւունք կուսակցութեան ստանալ ձեռքով գանձակները՝ գանձապահին ձեռքով:

»Հնչ. կուսակցութեան կեղ. վարչութ. անգամներ:

[Մտորոտութիւնք]

Ստեղծ այն հնչակեան գրութեամբ որով այս ժողովրդը կրցան ա՛յն իսկ իրենց ստորագրութեան տակ գրուած որոշումներն անորոշուած կեղծել, այն դիւրութեամբ որով Աւետիս Նազարեկեանի մը մասին թէ՛ բերանացի եւ թէ՛ գրաւոր իրենց բոլոր խոստումները կրցան ուրանալ:

Այն չըլլալիք լրբութեամբ, որով միեւնոյն վերջերս հրապարակու ալ կ'ստանն ամենուն ծանօթ գէպքերն ուրանալով, և իրենց երեւակայութեան բոլոր զառանցաքները իր իրողութիւն հոշակելով:

Ստեղծ, գրգռուելու այդ միեւնոյն անհատաւորի և անվիճելի դիւրութեամբ, այդ պարունները փոխանակ մեր այնքան արդար պահանջներուն գոհացում տալու, փութացին մեզ պատասխանել այլանդակ նամակով մը, ուր կը ճգնին կարծես մեզի դարձնել այն բոլոր ամբաստանութիւնները, զորս իրենց ներկայացուցած էինք, ճիշդ ինչպէս այսօր այնքան ջանքախնայ փառստրով իրենց գաւազնութեանց ու խաբկութեանց մէջ բռնուած ըլլալով հանդերձ, ինքզինքնին արդարացեալութեան միակ միջոցը գտած ըլլալ կը կարծեն՝ մեզի վերադրել փորձելով երեւակայական գաւազնութիւններ՝ առանց սակայն մէկ հատիկ փաստ մը կարեւալ միջոց դիւրել:

—Հնչակեան կուսակցութիւնը կործանուելու համար միացել են...

—Դաշնակցութիւնն ալ կործանել ծրագրեր են [1]

—Վառն ուրիշք, 7 տարւոյն պատմութիւն, մատենային արձանագրութիւններ:

Ու զի ինչէ՛ր, ի՞նչ գիտէ, ո՞վ կընայ պիտեալ այդ մարդոց արտաւոր երեւակայութեան չափը:

[1] Դրօշակեանները՝ որ առանց իւզձամբս քննութեան կատարելու օգտուել ու զեղին Արդւ. մանեանց և ընկերութեան յարուցած սքանաւելն, որ նոյն իսկ անոնց հետ ձեռք ձեռքի առած մեզի գէտ զգուհի պայքարի մը կընան անպիտի օրերու մէջ ուր ոչ միայն ունէ է անկեղծ յեղափոխական՝ այլ նոյն իսկ ո՛ր և է աղին. Հայ պէտք է որ այդ անխաղաղի գաւազներէն ինչպէս բոլոր չունեւոր հպուրմէն իսկ հետո պահէ ինքզինքը, Դրօշակեանները այսպէսով ունեցան ընթացք մը ո՛չ միայն անաւօթ ու անիւթ, այլ ևս անխիղ, որովհետեւ այդ Արդւ. մանեանցները, որոնց հետ կեղարարանային իրենց յիշումներն էին ներքնապէս, թէպէտեւ այդ միջոցին բարեկամ կը ձեւանային արտաքուստ, Դրօշակեանութիւնը կործանուելու երեւակայական ձգտումներ մեզի հրապարակու վերագրելով, Դրօշակեաններուն աջակցութիւնը մտաւրով հանդերձ, ահաւասիկ ինչ որ կը զբէր իրենց մին, Հ. Արդւ. մանեանց Ամերիկայէ Հնչ. նահանգ վարչութեան ուղղուած իր 1902 յուլիսի 7 թուագիր նամակին մէջ, որուն ինչպիսի մեր մօտ կը մնայ:

«Այ՛ո, Ամերիկեան մեր ամենատար կողմն է՝ «գրել եմ, որովհետեւ նոյն ուղիակ ունինք մեր «ամենապատմաբար անյայտն, Դաշնակցութիւնը

Печатница "Взаимность" — Варна.